


# ՕԳՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՄԷ



«ՕԳՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՄԷ» գրքոյկը հաւաքածոյ մըն է Աստուածաշունչէ՝ առընչակից համարներուն, որոնց նիւթերը առնուած են Սուրբ Գրքին զանազան մասերէն:

Համադրեց՝ ԻԻԱԹՍԸՆ ԿՈՒՏՄԷՆ

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ

Վասն զի մարգարէութիւն մը երբեք մարդոց կամքին պէս չտրուեցաւ, հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան:

Բ. Պետր. 1: 21

Քու խօսքդ իմ ոտքերուս ծրագ է ու իմ շաւիղներուս՝ լոյս:

Սաղմ. 119: 105

Իմ սրտիս մէջ պահեցի քու խօսքերդ, որպէս զի չմեղանչեմ քեզի դէմ:

Սաղմ. 119: 11

Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ.  
« Դուք մոլորած էք: Ոչ գրքերը գիտէք եւ ո՛չ Աստուծոյ զօրութիւնը»:

Մատթ. 22: 29

Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին:

Ղուկ. 21: 33

Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է եւ օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շտկելու եւ արդարութեան մէջ խրատելու համար: Բ.Տիմ. 3:16

Սակայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝  
յայտնեց, երբ դեռ մեղաւոր էինք: Քրիստոս մեզի  
համար մեռաւ.

Հռովմ. 5: 8

Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ  
մեռելներէն յարութիւն առնողներէն  
անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը.  
Անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր  
մեղքերէն լուաց:

Յայտն.Յովհ. 1: 5

Տէրը շատոնցմէ ինծի երեւցաւ՝ ըսելով.«Քեզ  
յաւիտենական սիրով սիրեցի, անոր համար  
ողորմութեամբ քեզ քաշեցի»:

Երեմ. 31: 3

Վասն զի Աստուած այնչափ սիրեց աշխարհը,  
միջեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն  
ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա  
յաւիտենական կեանք ունենայ:

Յովհ. 3: 16

Բարերա՛ր Աստուած, քու ողորմութեանդ  
շնորհովը Դուն նոյն ատեն բարի Հայր ես, որուն  
անունն իսկ ամէնամեծիդ գթութիւնը եւ  
ընտանութիւնը կ'աւետարանէ:

ՆԱՐԵԿԱՑԻ

## 2 ՅԻՍՈՒՍ ԶՐԻԱՏՈՍԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

Այս ամենը եղաւ, որպէս զի կատարուի Տէրոջմէն ըստածը մարգարէին միջոցով, որ կ'ըսէ. «Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, անոր անունը էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ»: Մատթ. 1:22-23

Յայտնապէս մեծ է աստուածաշտութեան խորհուրդը. Աստուած մարմնով յայտնուեցաւ, Հոգիով արդարացաւ, հրեշտակներուն երեւցաւ, հեթանոսներուն մէջ քարոզուեցաւ, աշխարհէն ընդունուեցաւ ու փառքով համբարձաւ: Ա.ՏԻՄ. 3:16

Յիսուս ըսաւ անոր. «Այսքան ժամանակ ես ձեզի հետ եմ եւ զիս չծանչցա՞ր, Փիլիպպոս: Ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ եւ դուն ի՞նչպէս կ'ըսես թէ Հայրը մեզի ցուցուր: Զե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջն եմ ու Հայրը իմ մէջս է: Յովհ. 14:9,10ա

Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը Աստուած էր: Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, (եւ անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ծշմարտութիւնով լեցուն: Յովհ. 1:1 եւ 14

Աստուած, քեզի հետ է Որդիդ ալ, որ նման է քեզի, եւ որուն կարող զօրութիւնը, Զու տէրութեանդ պէս, ահեղ ու անժամանակ է...

ՆԱՐԵԿԱՑԻ

Ով որ կը դաւանի թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, Աստուած անոր մէջ կը բնակի, ան ալ՝ Աստուծոյ մէջ:

Ա. Յովհ. 4: 15

Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ: Անոր անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան:

Եսայ. 9:6

Երբ անիկա կը խօսէր, լուսաւոր ամպ մը անոնց վրայ հովանի եղաւ եւ ամպէն ձայն մը եկաւ՝ ըսելով. «Ատիկա է սիրելի Որդիս, որուն հաւներ եմ, ատոր մտիկ ըրէք»:

Մատթ. 17: 5

Հրեշտակը պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Սուրբ Հոգին պիտի գայ քեզի ու Բարձրեալին զօրութիւնը քու վրայ հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Որդի պիտի կոչուի:

Դուկ. 1: 35

Կը պաղատիմ Քեզի, լոյսի ծառագայթ, երկնաւոր Արքայ, անպատում գովեալ, մեծ Աստուծոյ Անճա՛ռ Որդի:

ՆԱՐԵԿԱՅԻ

Յիսուս ըսաւ անոր. «Ես եմ յարութիւնն ու կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի:

Յովհ. 11: 25

Դուք զիս վարդապետ ու Տէր կը կոչէք, եւ աղեկ կ'ընէք, վասն զի այնպէս եմ:

Յովհ. 13: 13

Ըսաւ անոնց. «Դուք վարեն էք, ես վերեն եմ. դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ»:

Յովհ. 8: 23

Քանի որ աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ:

Յովհ. 9: 5

Յիսուս նորէն ըսաւ անոնց. «Ծշմարիտ ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, ես եմ ոչխարներուն դուռը»:

Յովհ. 10: 7

Եւ Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կենաց հացը. ան որ ինծի կու գայ, երբեք պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ, պիտի չծարաւի:

Յովհ. 6: 35

Կը դաւանիմ թէ դուն ծնունդ ես Աստուծոյ էութեան: Ոչ միայն Ռաբբի կը կոչեմ, որ ծշմարտութիւնը իբր թէ գիտցող վարդապետներուն պատուանունն է, այլ երկնքի եւ երկրի տէր կը հաւատամ զՔեզ:

ՆԱՐԵԿԱՑԻ

Եւ հրաման ըրաւ որ ժողովուրդը խոտին վրայ նստեցնեն: Հինգ նկանակը եւ երկու ձուկը առաւ, դէպի երկինք նայելով օրհնեց ու կտրելով նկանակները աշակերտներուն տուաւ եւ աշակերտները՝ ժողովուրդին: Ամէնքը կերան ու կշտացան եւ տասներկու կողով լեցուն աւելցած կտորուանքներ վերցուցին: Անոնք որ կերան, հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն եւ տղաքներէն զատ:

Մատթ. 14: 19-21

Երբ խօսելէն դադրեցաւ, ըսաւ Սիմոնին. «Յառաջ տար նաւը՝ դէպի խորունկը եւ ուռկաննիդ ձգեցէք ձուկ որսալու»: Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Վա՛րդապետ, բոլոր գիշերը աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուռկանը կը ձգեմ»: Երբ ըսուածը ըրին, խիստ շատ ձուկեր ժողովեցին, անանկ որ իրենց ուռկանը կը պատռտէր:

Ղուկ. 5: 4-6

Ծամբուն քով երկու կոյր նստած էին. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, աղաղակեցին ու ըսին. «Ողորմէ մեզի, Տէ՛ր, Դաւիթի Որդի»: Յիսուս խղճալով անոնց աչքերուն դպաւ: Շուտ մը անոնց աչքերը բացուեցան ու անոր ետեւէն գնացին:

Մատթ. 20: 30 եւ 34

Դուն կրնաս կատարել ա՛յնպիսի սքանչելի հրաշքներ, զորս չեմ կրնար խօսքով բացատրել:

ՆԱՐԵԿԱՅԻ

## 6 ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍ ԱՄԵՆԻՇԽԱՆ ԱՐԱՐԻԶ Է

Վասն զի անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքն է ու ինչ որ՝ երկրի վրայ կայ, անոնք որ կ'երեւնան եւ անոնք որ չեն երեւնար, թէ՛ աթոռները, թէ՛ տէրութիւնները, թէ՛ պետութիւնները, թէ՛ իշխանութիւնները. բոլոր բաները անով ու անոր համար ստեղծուեցան:

Կողոս. 1: 16

Աստուած այս վերջին օրերս իր Որդիովը խօսեցաւ մեզի հետ, որը ամէն բանի ժառանգորդ ըրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց:

Եբր. 1: 2

Վասն զի Քրիստոս ալ անոր համար մեռաւ ու ապրեցաւ, որ թէ՛ մեռելներուն եւ թէ՛ կենդանիներուն իշխէ:

Հռով. 14: 9

Հաւատարիմ է Աստուած, որով կանչուեցաք հաղորդակից ըլլալու իր Որդիին, մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

Ա. Կոր. 1: 9

Ուստի բոլոր Իսրայէլի տունը ծշմարտապէս թող գիտնայ թէ Աստուած զանիկա Տէ՛ր ալ ըրաւ՝ Օծեա՛լ ալ, այն Յիսուսը, որ դուք խաչեցիք:

Գործք. Առ. 2: 36

Կը հաւատամ թէ յարուցանելու կամ բժշկելու համար ունացած կարողութիւնդ կ'ազդէ ոչ թէ տունէ տուն... այլ նաեւ թէ վերին երկինքի մէջ բազմելով անկէց բովանդակ ստորին երկրի վրայ...

ՆԱՐԵԿԱՑԻ



Անոր առջեւ պիտի ժողվուին բոլոր ազգերը ու  
զանոնք իրարմէ պիտի զատէ, ինչպէս հովիւ մը  
ոչխարները այծերէն կը զատէ: Մատ. 25: 32

Քանզի Հայրը մէկը չի դատեր, հապա ամէն  
դատաստան Որդիին տուաւ: Յովհ. 5: 22

Իսկ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես կամ  
դուն ինչո՞ւ քու եղբայրդ կ'անարգես. վասն զի  
ամէնքս ալ Քրիստոսին ատեանին առջեւ պիտի  
կանգնինք: Հոովմ. 14: 10

Եւ ինք պատուիրեց մեզի, որ ժողովուրդին  
քարոզենք ու վկայութիւն տանք, թէ անիկա է  
Աստուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու  
մեռելներուն Դատաւորը: Գործք. Առ. 10: 42

Այն օրը երբ Աստուած մարդոց ծածուկ բաները  
դատէ Յիսուս Քրիստոսին ձեռքով իմ քարոզած  
աւետարանիս համեմատ: Հոովմ. 2: 16

Կը վկայեմ Աստուծոյ առջեւ եւ Յիսուս  
Քրիստոսին, որ պիտի դատէ կենդանիները ու  
մեռեալները իր յայտնուելուն ու  
թագաւորութեանը ատենը: Բ. Տիմ. 4: 1

Վա՛յ ինծի, երբ անարժան հոգիս եղկելի  
մարմինէս զատուի, ի՞նչպէս պիտի ներկայանամ  
ճշմարիտ Դատաւորին: ՆԱՐԵԿԱՅԻ

Ես եմ դուռը, եթե մէկը ինծմէ ներս մտնէ, պիտի փրկուի ու պիտի մտնէ ու ելլէ եւ արօտ գտնէ:

Յովհ. 10: 9

Յիսուս ըսաւ անոր. «Ես եմ ծամբան ու ծշմարտութիւնը եւ կեանքը. մէկը չօրը քով չի գար՝ եթե ոչ ինծմով»:

Յովհ. 14: 6

Անոր համար ձեզի ըսի թէ՝ ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք, վասն զի եթե չհաւատաք թէ ես Ան եմ, ձեր մեղքերուն մէջ պիտի մեռնիք: Յովհ. 8: 24

Երբ կատարեալ եղաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ:

Եբր. 5: 9

Ուրիշ մէկով փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկնքի տակ՝ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկուիլ: Գործք 4: 12

Ուստի բոլորովին կարող ալ է ապրեցնելու զանոնք, որ իրմով Աստուծոյ կու գան. որովհետեւ ինք միշտ կենդանի է անոնց բարեխօս ըլլալու համար:

Եբր. 7: 25

Գոհանալով չօր Աստուծմէ, որ մեզ լոյսի մէջ բնակող սուրբերուն վիճակին մասնակից ըլլալու արժանացուց: Որ մեզ ազատեց խաւարին իշխանութենէն ու իր սիրելի Որդիին թագաւորութեանը փոխադրեց: Որով մենք փրկութիւն ունինք իր արիւնովը, այսինքն մեղքի թողութիւն:

Կող. 1: 12-14

Վասն զի Որդին մարդոյ եկաւ որպէս զի կորսուածը փնտռէ ու փրկէ: Ղուկ. 19: 10

Դուք անկէ էք Քրիստոս Յիսուսով, որ մեզի Աստուծմէ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն եղաւ: Ա. Կոր. 1: 30

Նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով. «Արժանի ես դուն այդ գիրքը առնելու եւ ատոր կնիքները քակելու. վասն զի մորթուեցար ու քու արիւնովդ մեզ ծախու առիր Աստուծոյ համար ամէն ցեղէ ու լեզուէ եւ ժողովուրդէ ու ազգէ: Յայտ. Յով. 5: 9

Ան իր անձը մեզի համար տուաւ, որպէս զի մեզ ամէն անօրէնութենէ ազատէ ու մաքրէ, իրեն սեփական ժողովուրդ ընէ՝ բարի գործերու նախանձախնդիր: Տիմ. 2: 14

Մեր հաւատքին անսքող եւ պայծառ լուսաւորութիւնը ա՛լ աւելի յուսալի է Քրիստոսի շնորհաց այս տնտեսութեան մէջ, ուր կիրագործուի... «խաղաղութեան ուխտ» եւ «հաստատութեան կնիք» տէրունական խօսքը՝ Քրիստոսի միջոցաւ, որ մեր հաշտարար միջնորդն է եւ երկնային անմահ, կենդանի եւ մշտնջենաւոր բարեխօսը: ՆԱՐԵԿԱՑԻ

## ԱՐԻՒՆՈՎ ԿԸԼԼԱՅ

Ուրեմն հիմա որ իր արիւնով արդարացանք,  
ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատինք  
բարկութենէն: Հռովմ. 5: 9

Որով փրկութիւն ունինք մենք իր արեանը  
միջոցով, մեղքի թողութիւնը՝ իր շնորհքին  
ծոխութեան չափովը: Եփես. 1: 7

Հապա եթէ լոյսի մէջ քաւենք, ինչպէս անիկա  
լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդակից կ'ըլլանք ու  
անոր Որդիին Յիսուս Քրիստոսին արիւնը մեզ  
ամէն մեղքէ կը սրբէ: Ա. Յովհ. 1: 7

Գիտնալով որ դուք ո՛չ թէ ապականացու  
արծաթով կամ ոսկիով փրկուեցաք, որ ձեր  
հայրերէն ստացաք անուղիղ ծամբաներով, հապա  
Քրիստոսին պատուական արիւնովը՝ որպէս թէ  
անբիծ ու անարատ գառի մը: Ա. Պետ. 1: 18-19

Ալ ո՛րչափ աւելի Քրիստոսին արիւնը, որ  
յաւիտենական Հոգիին ձեռքով իր անձը անարատ  
պատարագ մատուցանեց Աստուծոյ, պիտի սրբէ  
ձեր խղճմտանքը մեռած գործերէն՝ կենդանի  
Աստուածը պաշտելու: Եբր. 9:14

Զնչէ՛ մ'աղաւորիս ամբարտաւանութեան  
մուրհակագիրը, հոգիիս մահապծիւրը ջրէ՛ սիրելի  
Որդիիդ արեան կայլակներովը: ՆԱՐԵԿԱՑԻ

## ԿՄՏԱՑՈՒԻ

Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով եւ այս՝ ո՛չ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է. Ո՛չ թէ գործերէն, որ մէկը չպարծենայ:

Եփես. 2: 8-9

Արդ՝ մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով:

Հռովմ. 5: 1

Վասն զի ան որ Աստուծմէ ծնած է՝ աշխարհին կը յաղթէ: Մեր հաւատքն է, որ աշխարհին կը յաղթէ:

Ա. Յովհ. 5: 4

Այն ատեն ըսին անոր. «Ի՞նչ ընենք որպէս զի Աստուծոյ գործերը կատարենք»: Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց. «Այս է Աստուծոյ գործը, որ անոր ղրկածին հաւատաք»: Յովհ. 6: 28-29

Բայց ասոնք գրուեցան, որպէս զի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին եւ որպէս զի հաւատալով կեանք ունենաք անոր անունովը:

Յովհ. 20: 31

Հաւա՛տքը պիտի գտնենք առաջին եւ գահերէց պայման՝ սրբութեանց մէջ մտնելու...«Հաւատք քո կեցուցին զքեզ»:

ՆԱՐԵԿԱՑԻ

Հապա որչափ որ երկինք երկրէ բարձր է, այնչափ իր ողորմութիւնը իրմէ վախցողներուն վրայ զօրաւոր է:

Սաղ. 103: 11

Բայց Տէրոջը ողորմութիւնը յաւիտեանս յաւիտենից իրմէ վախցողներուն վրայ է ու անոր արդարութիւնը՝ որդիներուն որդիներուն վրայ:

Սաղմ. 103: 17

Տէրոջը ողորմութեամբ չհատանք, վասն զի անոր գթութիւնը չպակսեցաւ. Անոնք ամէն առտու կը նորոգուին, քու ծշմարտութիւնդ մեծ է:

Ողբ Երեմ. 3: 22-23

Ո՛չ թէ արդարութեան գործերէն՝ որոնք մենք ըրինք, հապա իր ողորմութեան համաձայն մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին միջոցաւ ու Սուրբ Հոգիին նորոգելովը:

Տիտ. 3: 5

Զեզի պէս Աստուած ո՞վ կայ, որ անօրէնութեան կը ներէ ու իր ժառանգութեանը մնացորդին յանցանքը անտես կ'ընէ. իր բարկութիւնը յաւիտեան չի պահեր, քանզի ողորմութիւնը կը սիրէ:

Միքիայ 7: 18

Կը թագաւորես քաղցրութեամբ, ողորմութեամբ եւ մարդասիրութեամբ: Այո՛, ամենուն համար, ամէն կերպով ու ամէն բանի մէջ կարող ես դուն, գթած:

ՆԱՐԵԿԱՑԻ

Եկե՛ք ինձի, բոլոր յոգնած ու քեռնաւորուածներ  
եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Մատթ. 11: 28

Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն. «Եկո՛ւր», եւ ան որ  
կը լսէ՝ թող ըսէ. «Եկո՛ւր», ու ան որ ծարաւ է՝ թող  
գայ եւ ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ:  
Յայտ. Յովհ. 22:17

Տօնին վերջին օրը Յիսուս կայներ էր,  
կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Եթէ մեկը ծարաւ է, թող  
ինձի գայ ու խմէ»: Յովհ. 7: 37

Ո՛վ ծարաւցածներ, ջուրերուն եկե՛ք եւ ստակ  
չո՛նեցողներ, եկե՛ք, ծախու առե՛ք ու կերե՛ք.  
Եկե՛ք, առանց ստակի եւ ձրի գինի ու կաթ ծախու  
առե՛ք: Եսայեայ 55: 1

Հիմա եկեք վիճաբանինք, կ'ըսէ Տէրը. Եթէ ձեր  
մեղքերը կրկնակի կարմիրի պէս են, ձիւնի պէս  
պիտի ծերմկնան, եւ եթէ որդան կարմիրի նման  
են, ասրի պէս ծերմակ պիտի ըլլան: Եսայեայ 1: 18

Դարձե՛ք ձեր Աստուծոյն եւ ըսեք Անոր.- Դուն  
կարող եմ թողութիւն տալ մեր մեղքերուն...  
Աստուած է որ ահա խօսեցաւ...: ՆԱՐԵԿԱՑԻ

## 14 ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈԳԻՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՈՂՆԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱԽԱԿԸ ԿԸԼԼԱՆ

Վասն զի որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին, անոնք Աստուծոյ որդիներն են: Քանզի դուք ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու, հապա որդեգրութեան հոգին առիք, որ անով կը կանչենք Աբբա Հայր: Հռովմ. 8: 14-15

Ասով յայտնի են Աստուծոյ որդիներն ու Սատանային որդիները: Ամէն ով որ արդարութիւն չի գործեր, անիկա Աստուծմէ չէ, եւ ան ալ՝ որ իր եղբայրը չի սիրեր: Ա. Յովհ. 8: 10

Ըրպէս զի ըլլաք ասբրօ ու ասարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհի մէջ: Փիլիպ. 2: 15

Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը: Յովհ. 1: 12

Ասոր համար ելէ՛ք անոնց մէջէն ու զատուեցէ՛ք, կ'ըսէ Տէրը: «Պիղծ բանի մի՛ դպչիք ու ես ձեզ պիտի ընդունիմ եւ ես ձեզի Հայր պիտի ըլլամ ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք», կ'ըսէ Ամենակալ Տէրը: Բ. Կոր. 6: 17-18



Վա՛յ անոնց, որոնք առտուն կանուխ կ'ելլեն ու ցքի խմելու ետեւէ կ'ըլլան եւ իրիկունն ալ կ'ուշանան, մինչեւ որ գինին իրենց գլուխը տաքցնէ:

Եսայիայ 5: 11

Մի՛ նայիր գինիին կարմրութեանը, գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն ու շիտակ վազելուն: Անիկա ետքը օձի պէս կը խածնէ ու քարբի պէս կը խայթէ:

Առակաց 23: 31-32

Արդ մարմնին գործերը յայտնի են, որոնք են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն, կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նախանձներ, բարկութիւններ, կամ հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանումներ, չար նայուածքներ, մարդասպանութիւններ, գինովութիւններ, անառակութիւններ ու ինչ որ ասոնց նման են. զոր հիմակուրնէ ես ձեզի կ'ըսեմ, ինչպէս առաջուրնէ ալ կ'ըսէի, որ այսպիսի բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն:

Գաղ. 5: 19 եւ 21

## ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏԵԻԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆ Է՝ ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՎԻՐՈՒՄ

Յիսուս ըսաւ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ: Այս է առաջին ու մեծ պատուիրանքը»:

Մատթ. 22: 37-38

Երբ անիկա դուրս ելաւ ծամբուն մէջ, ահա մարդ մը վազեց ու անոր առջեւ ծունկի գալով՝ հարցուց անոր ու ըսաւ. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: Յիսուս ըսաւ անոր. «Ինչու՞ զիս բարի կ'անուանես: Մէկէն զատ բարի չկայ, որ է Աստուած: Պատուիրանքները գիտես. Շնութիւն մի՛ ըներ, Սպաննութիւն մի՛ ըներ, Գողութիւն մի՛ ըներ, Սուտ վկայութիւն մի՛ ըներ, Զրկանք մի՛ ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ»: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոր. «Վա՛րդապետ, ատոնք ամէնքը մանկութենէս ի վեր պահեր եմ»: Յիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկա ու ըսաւ անոր. «Մեկ բան պակաս է քեզի, գնա՛, ունեցածդ ծախէ՛, տո՛ւր աղքատներուն ու երկինքը գանձ պիտի ունենաս եւ խաչը վերցուր ու եկուր իմ ետեւէս»: Անիկա այս խօսքին համար խոժոռելով՝ տրտմած գնաց, վասն զի շատ ստացուածք ունէր:

Մարկ. 10: 17-22

Աղբերացած արցունքներու խառնելով հառաչանքներս՝ բժշկութիւն կ'աղերսեմ: ՆԱՐԵԿԱՅՈՒ

## ԽՂՃԱԼԻ Է

Խօսքը կատարեցէ՛ք, միայն մի՛ լսէ՛ք՝  
ինքնզինքնիդ խաբելով: Յակոբոս 1: 22

Զե՞ք գիտեր թէ անիրաւները Աստուծոյ  
արքայութիւնը պիտի չԺառանգեն: Մի՛ խաբուիք:  
Ո՛չ պոռնիկները, ո՛չ կռապաշտները, ո՛չ  
շնացողները, ո՛չ իգացեալները, ո՛չ  
արուագէտները, ո՛չ գողերը, ո՛չ ագահները, ո՛չ  
գինովները, ո՛չ նախատողները ու՛ ոչ  
յափշտակողները Աստուծոյ թագաւորութիւնը  
պիտի ժառանգեն: Ա. Կորնթ. 6: 9-10

Զ՛րլլա՛յ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով,  
վասն զի այս բաներուն համար Աստուծոյ  
բարկութիւնը կու գայ անհնազանդութեան  
որդիներուն վրայ: Եփես 5: 6

Որդեակներ, մէկը ձեզ չխաբէ. ան որ  
արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս Անիկա  
արդար է: Ան որ մեղք կը գործէ, Սատանայէն է,  
վասն զի Սատանան սկիզբէն ի վեր կը մեղանչէ:  
Ա. Թովհ. 3: 7 եւ 8ա

Քանզի եթէ մէկը ինքզինք բան մը ըլլալ կը  
սեպէ ու չէ, անիկա իր անձը կը խաբէ: Գաղ. 6: 3

Անսխալ է քու խնկուած խօսքդ, եւ բոլորովին  
ստոյգ՝ իմ վրիպականութեան եւ դժնդակօրէն  
անիրաւ դատումիս հանդեպ: ՆԱՐԵԿԱՑԻ

Վասն զի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհի մտաւ եւ այն մեղքէն՝ մահը, այնպէս բոլոր մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամենքն ալ մեղանչեցին:

Հռովմ. 5: 12

Անկէ յետոյ ցանկութիւնը յղանալով՝ մեղք կը ծնանի եւ մեղքը որ կատարուի՝ մահ կը ծնանի:

Յակոբոս 1: 15

Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն:

Հռովմ. 8: 6

Այն անձը որ մեղք կը գործէ, պիտի մեռնի: Որդին հօրը անօրէնութիւնը պիտի չկրէ ու հայրը որդիին անօրէնութիւնը պիտի չկրէ: Արդարին արդարութիւնը իր վրայ պիտի ըլլայ ու ամբարշտին ամբարշտութիւնը իր վրայ պիտի ըլլայ:

Եզեկիէլի 18: 20

Ինչպէս որ արդարութիւնը կեանքի կ'առաջնորդէ, նոյնպէս չարութեան հետեւողը իր մահուանը կ'երթայ:

Առակաց 11: 19

Դժողքին մէջ գերի վարուած հոգիներուն պէս, ե՛ս ալ արգելափակուած եմ կորուստի վտանգին մէջ:

ՆԱՐԵԿԱՑԻ

Ասիկա ըսելէն ետքը՝ մեծ ձայնով մը կանչեց.  
«Ղա՛գարոս, դուրս եկուր»: Մեռելն ալ ելաւ՝  
ոտքերը ու ձեռքերը պատանքով կապուած եւ  
երեսը վարշամակով պատուած: Յիսուս ըսաւ  
անոնց. «Արձակեցէ՛ք ասիկա ու թողէք որ  
երթայ»: Թովհ. 11: 43-44

Ես կենդանի եմ ու ես ա՛ն եմ որ մեռայ եւ ահա  
կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից եւ ես ունիմ  
մահուան ու դժոխքին բանալիները: Յայտ. Թովհ. 1: 18

Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ, որովհետեւ  
ես իմ կեանքս կը դնեմ, որպէս զի նորէն առնեմ  
զանիկա: Մէ՛կը չի հաներ զանիկա ինծմէ, հապա  
ես կը դնեմ զանիկա ինքնիրմէս: Իշխանութիւն  
ունիմ զանիկա դնելու եւ իշխանութիւն ունիմ  
զանիկա նորէն առնելու. այս պատուերը իմ  
Հօրմէս առի: Թովհ. 10: 17-18

Մօտենալով՝ դագաղին դպաւ, ու տանողները  
կանգ առին. եւ ըսաւ. «Ո՛վ պատանի, քեզի՛  
կ'ըսեմ, Ելի՛ր»: Ու մեռելը ելաւ նստաւ ու սկսաւ  
խօսիլ: Ղուկ. 7: 14-15ա

Յաղթական խօսքիդ հրամանին սուրովը  
խզեցիր մահուան սատակիչ կապը ու ցրուեցիր  
մեղքին կասկածը: ՆԱՐԵԿԱՑԻ

1. Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաւ:

2. Դուն քեզի կուռք չշինես, ո՛չ վերը երկինքի մէջ, կամ վարը՝ երկրի վրայ, կամ երկրի տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութեամբը. Անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. վասն զի ես՝ քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն, մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը, որոնք կ'ատեն զիս, եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը, որոնք կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:

3. Տէրոջը՝ քու Աստուծոյդ՝ անունը պարապ տեղ բերանդ չառնես. վասն զի Տէրը իր անունը պարապ տեղ բերան առնողը անմեղ պիտի չսեպէ:

4. Հանգստութեան օրը զգուշութիւն ըրէ, որ սուրբ պահես, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց: Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործերդ ընես. Բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. այն օրը գործ մը չգործես, ո՛չ դուն, ո՛չ քու որդիդ, ո՛չ քու աղջիկդ, ո՛չ քու ծառադ ու աղախինդ, ո՛չ քու եզդ ու էջդ, ո՛չ քու անասունդ, ո՛չ ալ քու տանդ մէջ եղած օտարականը, որպէս զի քու ծառադ ու

աղախինդ ալ քեզի պէս հանգստանան: Միտքդ բեր թէ որ դուն եգիպտոսի երկրին մէջ ծառայ էիր ու քու Տէր Աստուածդ զօրաւոր ձեռքով ու բարձր բազուկով քեզ անկէ հանեց, անոր համար քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց որ հանգստութեան օրը պահես:

5. Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, ինչպէս քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց, որպէս զի քու օրերդ երկար ըլլան ու քեզի աղէկ ըլլայ այն երկրին մէջ, որ քու Տէր Աստուածդ քեզի պիտի տայ:

6. Սպաննութիւն մի՛ ըներ:

7. Շնութիւն մի՛ ըներ:

8. Գողութիւն մի՛ ըներ:

9. Զու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ:

10. Զու դրացիիդ կնոջ մի՛ ցանկար. քու դրացիիդ տանը, կամ անոր արտին, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն, կամ քու դրացիիդ ոեւէ մէկ բանին մի՛ ցանկար:

Տերոջը աչքերը ամէն տեղ չարերն ու բարիները  
կը դիտեն: Առակաց 15: 3

Վասն զի չկայ ծածուկ բան մը, որ պիտի  
չյայտնուի, ո՛չ ալ գաղտուկ բան մը, որ պիտի  
չգիտցուի ու երեւան չելլէ: Ղուկ. 8: 17

Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես. եթէ դժողքը  
անկողինս ընեմ, ահա դուն հոն ես: Մութն ալ  
քեզի խաւար չէ, հապա գիշերը ցորեկի պէս  
լուսաւոր կ'ըլլայ: Խաւարը եւ լոյսը միեւնոյն  
բանն են քու առջեւդ: Սաղ. 139: 8 եւ 12

Վասն զի Անոր աչքերը մարդուն ծամբաներուն  
վրայ են ու մարդուն ամէն քայլերը կը տեսնեն:  
Ո՛չ խաւար կայ եւ ո՛չ մահուան շուք՝ որ  
անօրէնութիւն գործողները հոն պահուըտին:

Յորայ 34: 21-22

«Կամ թէ մէկը ծածուկ տեղեր կրնա՞յ պահուիլ,  
որ ես զանիկա չտեսնեմ», կ'ըսէ Տէրը. «Միթէ  
երկինքն ու երկիրը լեցնողը ես չե՞մ», կ'ըսէ Տէրը:  
Երեմ. 23: 24

Վասն զի ծածկուածները մերկ են քո առջեւդ,  
ու աներիւոյթները՝ հրապարակուած: ՆԱՐԵԿԱՑԻ



## ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Հիմա երկինք ու երկիր պահուած են նոյն խօսքով կրակի համար, մինչեւ դատաստանին ու ամբարիշտ մարդոց կորուստեան օրը: Բ. Պետրոս 3: 7

Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան, եւ այն բոլոր ազգերը, որոնք Աստուած կը մոռնան:  
Սաղ. 9: 17

Արդ. եթէ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. աղէկ է քեզի կաղ կամ պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ երկու ոտք ունենալ ու յաւիտենական կրակին մէջ ձգուիլ: Մատթ. 18: 8

Որդին մարդոյ իր հրեշտակները պիտի ղրկէ ու պիտի ժողվեն անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները եւ զանոնք, որ անօրէնութիւն կը գործեն ու կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք: Հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրծտել: Մատթ. 13: 41-42

Ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը: Մատթ. 25: 46

Արդար ես քու իրաւունքիդ եւ յաղթող դատաստանի մէջ: ... Ես ինքս ինծի համար կը վկայեմ թէ արժանի եմ այդ ամենուն: ՆԱՐԵԿԱՑԻ

Եւ ինչպէս մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ ու անկէ ետքը դատաստան: Եբր. 9: 27

Վասն զի ինք օր մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարութեամբ պիտի դատէ այն մարդուն ձեռքով՝ որ որոշեց ու ամենուն հաւատացուց՝ զանիկա մեռելներէն յարուցանելով: Գործք 17: 31

Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր անձին համար: Հռովմ. 14: 12

Ասով սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որպէս զի համարձակութիւն ունենանք դատաստանին օրը, վասն զի ինչպէս է ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհի մէջ: Ա. Թովհ. 4: 17

Վասն զի պէտք է որ ամէնքս ալ Քրիստոսին ատեանին առջեւ ներկայանանք, որպէս զի ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը առնէ՝ ինչ որ գործեր է, թէ՛ բարի եւ թէ՛ չար: Բ. Կորնթ. 5: 10

Տէրը գիտէ բարեպաշտները փորձութենէ ազատել եւ անիրաւները տանջանքի համար դատաստանի օրուան պահել: Բ. Պետրոս 2: 9

Դատաւորը՝ անկաշառ, ատեանը հզօր... ու պատիժը՝ անողորմ է...: ՆԱՐԵԿԱՑԻ

Բայց շնորհքը յանցանքին պէս չէ. վասն զի եթէ մարդու մը յանցանքովը շատեր մեռան, ալ ո՛րչափ աւելի Աստուծոյ շնորհքը եւ այն պարգեւը որ Յիսուս Քրիստոսի՝ մէկ մարդուն՝ շնորհքովն է, շատերուն վրայ աւելցաւ:

Հռովմ. 5:15

Գոհութիւն Աստուծոյ՝ անոր անպատում պարգեւին համար:

Բ. Կոր. 9:15

Աստուած անբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ:

Ա. Պետրոս 5:5բ

Քանզի դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքը, թէ ինք ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր, որպէս զի դուք անոր աղքատանալովը հարստանաք:

Բ. Կորնթ. 8:9

Առաքեալները մեծ զօրութիւնով վկայ էին Տէր Յիսուսին յարութեանը: Անոնց ամէնուն վրայ մեծ շնորհք կար:

Գործք 4:33

Ուրեմն մարդուն ուզելէն կամ ջանքէն չէ, հապա Աստուծմէ՝ որ կ'ողորմի:

Հռովմ. 9:16

Յիսուս Քրիստոս փրկչիդ, աննուազ լիութիւնէն մարդասիրութիւն կը պաղատիմ:

ՆԱՐԵԿԱՑԻ

Ուստի ապաշխարեցէ՛ք ու դարձի եկէ՛ք, որպէս զի մեղքերնիդ ջնջուի. որպէս զի սփոփանքի ժամանակները գան Տէրոջը երեսէն: Գործք 3: 19

Արդ՝ Աստուած տգիտութեան ատենները անտես ընելով՝ հիմա ամէն տեղ կը պատուիրէ բոլոր մարդոց, որ ապաշխարեն: Գործք 17: 30

Ձեզի կ'ըսեմ ... հապա եթէ չապաշխարէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Դուկ. 13: 3

Ձեր ըրած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէ՛ք, եւ ձեզի նոր սիրտ ու նոր հոգի ստացէ՛ք: Ինչու՞ մեռնիք, ով Իսրայէլի տուն: Եզեկիել 18: 31

Ու կ'ըսէր. «Ապաշխարեցէ՛ք, վասն զի երկնքի թագաւորութիւնը մօտեցած է»: Մատթ. 3: 2

Վասն զի Աստուծոյ ուզածին պէս եղած տրտմութիւնը փրկութեան համար ապաշխարութեան կ'առաջնորդէ, որ չի զղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը մահ կը պատճառէ: Բ. Կորնթ. 7: 10

Ո՛վ Ամենակեցոյց. ազատարար հրամանովդ մաքրէ՛ անօրենութեան բաժակիս մահաբեր թմրութեան մրուրները: ՆԱՐԵԿԱՑԻ

Թող անբարիշտը՝ իր ծամբայէն ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի եւ Տէրոջը դառնայ ու անիկա պիտի թողորմի անոր ու մեր Աստուծոյն՝ վասն զի անիկա առատապէս կը ներէ:  
Եսայեայ 55: 7

Աստուած իր աջ ձեռքով զանիկա Առաջնորդ ու Փրկիչ ըլլալու բարձրացուց, Իսրայէլի ապաշխարութիւն եւ մեղքերու թողութիւն տալու:  
Գործք 5: 31

Եթէ անբարիշտը իր գործած բոլոր մեղքերէն դառնայ ու իմ բոլոր օրէնքներս պահէ եւ իրաւունք ու արդարութիւն ընէ, անիկա անշուշտ պիտի ապրի, պիտի չմեռնի:  
Եզեկիէլի 18: 21

Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին. «Մրդեակ, քու մեղքերդ քեզի ներուած են»:  
Մարկ. 2: 5

Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի պիտի ներէ:  
Մատթ. 6: 14

...Որով կեանք եւ երանութիւն քաւութեամբ մէկտեղ կը շնորհուին ինծի պէս մեղաւորի մը:  
ՆԱՐԵԿԱՑԻ

28 ՀՐԱԺԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՍԻՐՈՒԹԵՆԷ՝  
ՊԱՅՄԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԿԵԱՆՔԻ

Վերի բաներուն վրայ մտածեցէք, ո՛չ թէ այս երկրին վրայիններուն: Կողոս. 3: 2

Քանզի Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր մարդոց երեւցաւ: Ան մեզ կը խրատէ՝ որպէս զի ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք եւ զգաստութիւնով ու արդարութիւնով եւ բարեպաշտութիւնով ապրինք այս աշխարհի մէջ: Տիմոս 2:11-12

Լուացուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք, իմ աչքերուս առջեւէն ձեր չար գործերը մէկդի՛ ըրէք, չարութիւն գործելէ դադարեցէք: Եսայեայ 1: 16

Մի՛ սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին չօրը սէրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է՝ մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ չօրմէն չէ, հապա այս աշխարհէն է: Ա. Թովհ. 2: 15-16

Ու կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ զանոնք յանդիմանեցէ՛ք: Եփես. 5:11

Ձեզի նոր սիրտ պիտի տամ ու ձեր ներսիդին  
նոր հոգի պիտի դնեմ եւ ձեր մարմիններէն  
քարեղէն սիրտը պիտի հանեմ ու ձեզի  
մարմնեղէն սիրտ պիտի տամ: Եզեկիել 36: 26

Պատասխան տուաւ Յիսուս եւ ըսաւ անոր.  
«Ծշմարիտ ծշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մարդ մը  
նորէն չծնանի, չի կրնար Աստուծոյ  
թագաւորութիւնը տեսնել»:  
Յովհ. 3: 3

Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր  
ստեղծուած մըն է: Հիները անցան, եւ ահա ամէն  
բան նոր եղաւ:  
Բ. Կորնթ. 5: 17

Քանի որ գիտէք թէ անիկա արդար է, ուրեմն  
կ'իմանաք թէ ամէն ով որ արդարութիւն կը  
գործէ, անկէ ծնած է:  
Ա. Յովհ. 2: 29

Նորէն ծնած ըլլալով՝ ո՛չ թէ ապականացաւ  
սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ  
կենդանի ու յաւիտենական խօսքովը: Ա. Պետ. 1: 23

Գիտենք թե ան, որ Աստուծմէ ծնած է՝ մեղք  
չի գործեր: Ան որ Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը  
պահէ, ու չարը անոր չի դպչիր:  
Ա. Յովհ. 5: 18

Փշրուած հողեղեն անօթ մըն եմ, աստուածօրէն  
հրաշակերտութեամբ նոր ի նորոյ շինէ՛, զիս՝ որ  
մեղքերէ հինցած...:  
ՆԱՐԵԿԱՅԻ

## ՍՐԲԱԿԵԱՑ ԿԵԱՆՔԻ

Դուք յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած էիք, ինք ձեզ կենդանացուց: Անոր հետ մեզ յարուցանեց ու անոր հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով:

Եփես. 2: 1 եւ 6

Արդ եթէ Քրիստոսին հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը:

Կողոս. 3: 1

Որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց, որպէս զի մենք մեղքերէն ազատինք ու արդարութեան համար ապրինք, որուն վերքերովը դուք բժշկուեցաք: Ա. Պետ. 2: 24

Անոնք որ Քրիստոսիններն են՝ իրենց մարմինը խաչը կը հանեն բնական կիրքերով ու ցանկութիւններով մէկտեղ:

Գաղ. 5: 24

Քա՛ւ լիցի. մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս դեռ անոր մէջ կենանք: Այսպէս դուք ձեր անձերը մեղքի մեռած սեպեցէք, բայց Աստուծոյ կենդանի՝ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռքով:

Հռովմ. 6: 2 եւ 11

Քու աստուածախառն անապական ներգործութեամբ ձեռքս կարկառելով վերակենդանացուցիր իր բոլոր սերունդներովը մահուան դատապարտուած նախամարդը:

ՆԱՐԵԿԱՑԻ



**ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱՅԻԼ ՀԱՎԱՏՔՈՎ ՊԱՅՄԱՆ՝ 31**  
**ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ**

Ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը  
բարձրացուց, այնպէս պէտք է որ Որդին մարդոյ  
բարձրանայ, Որպէս զի ամէն ո՛վ որ անոր  
հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք  
ունենայ: Թովհ. 3: 14-15

Քանզի մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ  
ձրի պարգեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը  
Յիսուս Քրիստոսի ձեռքով: Հռովմ. 6: 23

Այս է յաւիտենական կեանքը, որ ծանչնան քեզ  
միմիայն ծշմարիտ Աստուածոյ ու Յիսուս  
Քրիստոսը, որ դուն ղրկեցիր: Թովհ. 17: 3

Ան որ Որդիին կը հաւատայ, յաւիտենական  
կեանքն ունի. եւ ան որ Որդիին չի հնազանդիր,  
անիկա կեանքը պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ  
բարկութիւնը անոր վրայ պիտի ըլլայ: Թովհ. 3: 36

Վասնզի ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի  
հնձէ: Ան որ իր մարմնին կը սերմանէ, այն  
մարմնէն ապականութիւն պիտի հնձէ ու ան որ  
Հոգիին կը սերմանէ, այն Հոգիէն յաւիտենական  
կեանք պիտի հնձէ: Գաղ. 6: 8

Մեղքի պարտքերէն մաքրելով՝ ապրեցուր զիս...  
ով Բարեգութ: ՆԱՐԵԿԱՑԻ

## 32 ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒԱԾ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ

Որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդիին Հոգին ձեր սրտերուն մէջ դրկեց, որ կ'աղաղակէ «Աբբա՛ Հայր»:  
Գաղ. 4: 6

Ան որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է զիս սիրողը եւ ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի ու ես զանիկա պիտի սիրեմ եւ ինքնզինքս անոր պիտի յայտնեմ:  
Յովհ. 14: 21

Եւ արդարութեան գործը՝ խաղաղութիւն, ու արդարութեան արդիւնքը հանգիստ ու ապահովութիւն պիտի ըլլայ յաւիտեան:  
Եսայեայ 32: 17

Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ որդիներն ենք:  
Հռովմ. 8: 16

Որդեակներս, ոչ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ծշմարտութիւնով:

Ասով կը ծանչնանք թէ ծշմարտութենէն ենք: Մեր սրտերուն համարձակութիւնովը անոր առջեւ պիտի երեւնանք:  
Ա. Յովհ. 3: 18-19

Ասով գիտենք թէ մենք անոր մէջ կը բնակինք ու անիկա մեր մէջ, որ իր Հոգին մեզի տուաւ:  
Ա. Յովհ. 4: 13

Ա՛լ հիմա քեզի կու գամ: Աշխարհի մէջ այս  
բաները կը խօսիմ, որպէս զի իմ ուրախութիւնս  
իրենց անձերուն մէջ կատարեալ ըլլայ:  
Յովհ. 17: 13

Վասն զի Աստուծոյ արքայութիւնը կերակուր  
ու խմելիք չէ, հապա արդարութիւն եւ  
խաղաղութիւն ու խնդութիւն Սուրբ Հոգիով:  
Հոովմ. 14: 17

Քրիստոսին հետ խաչը ելայ եւ ալ կենդանի եմ  
ո՛չ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս.  
բայց ես որ հիմա մարմինովս կ'ապրիմ՝ Աստուծոյ  
Որդիին հաւատքովը կ'ապրիմ, որ զիս սիրեց ու իր  
անձը ինծի համար մատնեց:  
Գաղ. 2: 20

Ուրախութեամբ ջուր պիտի քաշէք փրկութեան  
աղբիւրներէն:  
Եսայ. 12: 3

Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի իմ  
ուրախութիւնս ձեր մէջ մնայ ու ձեր  
ուրախութիւնը լման ըլլայ:  
Յովհ. 15: 11

Կենաց ծամբան ինծի պիտի ցուցնես. Երեսիդ  
առջեւ լեցուն ուրախութիւն կայ, Քու աջ կողմդ  
միշտ հաճութիւններ կան:  
Սաղ. 16: 11

Բայց եթէ Տէրոջը խօսքին հնազանդութիւն չընէք, ու Տէրոջը հրամանին դէմ կենաք, այն ատեն Տէրոջը ձեռքը ձեր վրայ ու ձեր հայրերուն վրայ պիտի ըլլայ:

Ա. Թագ. 12: 15

Զե՞ք գիտէր թէ որու որ անձերնիդ իբր ծառայ ընծայէք հնազանդելու, ծառայ կ'ըլլաք անոր՝ որուն որ կը հնազանդիք, թէ՛ մեղքի՝ որ մահուան կը տանի, եւ թէ՛ հնազանդութեան՝ որ արդարութեան:

Հռովմ. 6: 16

Եւ ձեզի նեղութիւն կրողներուդ՝ մեզի հետ հանգիստ, երբ Տէր Յիսուս երկինքէն յայտնուի իր զօրաւոր հրեշտակներովը, բոբբոքած կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ Աստուած չեն ծանչնար եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին աւետարանին չեն հնազանդիր. Որոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով եւ պիտի վտարուին Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն:

Բ. Թես. 1: 7-9

Ահա ես այսօր ձեր առջեւ օրհնութիւն ու անէծք կը դնեմ. Օրհնութիւնը՝ եթէ հնազանդութիւն ընէք ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքներուն, որոնք ես այսօր ձեզի կը պատուիրեմ եւ անէծքը՝ եթէ ձեր Տէր Աստուծոյն պատուիրանքներուն չհնազանդիք:

Բ Օրինաց 11: 26-28ա

Ամէն լեզու դաւանի թէ՛ Յիսուս Քրիստոս Տէր է՝ Հօր Աստուծոյ փառքին համար: Փիլիպ. 2: 11

Ա՛րդ՝ ով որ մարդոց առջեւ զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ՝ Հօրս առջեւ՝ որ երկինքն է: Եւ ով որ մարդոց առջեւ զիս կ'ուրանայ, ես ալ զանիկա պիտի ուրանամ իմ Հօրս առջեւ՝ որ երկինքն է: Մատթ. 10: 32-33

Վասն զի եթէ քու բերանովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուցանեց՝ պիտի փրկուիս. (Վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու համար ու բերնով կը խոստովանի փրկուելու համար): Հռովմ. 10: 9-10

Ամէն ով որ կ'ուրանայ Որդին, անիկա Հայրն ալ չընդունիր. բայց ան որ կ'ընդունի Որդին, անիկա Հայրն ալ կ'ընդունի: Ա.Թովհ. 2: 23

Վասն զի ով որ զիս ու իմ խօսքերս դաւանիլը ամօթ սեպէ, Որդին մարդոյ ալ զանիկա դաւանիլը ամօթ պիտի սեպէ՝ երբ գայ իր ու Հօրը եւ սուրբ հրեշտակներուն փառքովը: Ղուկ. 9: 26

Այն ատեն Յիսուս անապատը տարուեցաւ Սուրբ Հոգիէն, որպէս զի Սատանայէն փորձուի: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Ետիս գնա, Սատանայ՝, վասն զի գրուած է թէ՝ Զու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշտես»: Այն ատեն Սատանայ զանիկա թողուց եւ հրեշտակները եկան ու անոր սպասաւորութիւն կ'ընէին:

Մատթ. 4: 1 եւ 10-11

Անոնց աչքերը բանալու, խաւարէն լոյսի, ու Սատանային իշխանութենէն Աստուծոյ դարձնելու, որպէս զի անոնք մեղքերու թողութիւն գտնեն եւ սուրբերուն հետ մասնակից ըլլան ինծի հաւատալով:

Գործք 26: 18

Արթուն կեցէք, հսկեցէ՛ք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանան՝ մոնչող առիւծի պէս կը պտըտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կ'լլէ:

Ա. Պետ. 5:8

Ձեր վրայ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէս զի կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ դնել:

Եփես. 6: 11

Քրիստոս Աստուծոյ արդարութիւնը շատ իրաւացի է աւելի ինծի քան թէ չարիքներու սկզբնահայր սատանային հաշդեպ, որովտեսեւ Ան յայտնուեցաւ անոր գործերը քանդելու:

ՆԱՐԵԿԱՅԻ

Ու ետքը պիտի յայտնուի այն անօրէնը, որ Տէր Յիսուս իր բերնին շունչովը պիտի սպառէ ու իր գալուստին յայտնուելութեամբը պիտի կորսնցնէ:

Բ. Թեա. 2: 8

Ուստի հնազանդեցէ՛ք Աստուծոյ: Սատանային հակառակ կեցէ՛ք, եւ անիկա ձեզմէ պիտի փախչի: Աստուծոյ մօտեցէ՛ք, ու անիկա ձեզի պիտի մօտենայ:

Յակոբու 4: 7-8ա

Որովհետեւ զաւակները մարմնին ու արիւնին հաղորդակցեցան, ինք ալ անոնց բաժնեկից եղաւ, որպէս զի իր մահովը փծացնէ զանիկա որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն՝ Սատանան:

Եբր. 2: 14

Ան որ մեղք կը գործէ, Սատանայէն է, վասն զի Սատանան սկիզբէն ի վեր կը մեղանչէ. ասոր համար Աստուծոյ Որդին յայտնուեցաւ, որ Սատանային գործերը քանդէ:

Ա. Յով. 3: 8

Ուրեմն ո՞վ որ պիտի զատէ մեզ Քրիստոսին սէրէն, տառապա՞նքը, կամ նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտա՞նգը, կամ սու՞րը: Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք անո՞վ որ մեզ սիրեց:

Հոովմ. 8: 35 եւ 37

Եթէ մէկը կ'ըսէ թէ «Ես Աստուած կը սիրեմ», ու իր եղբայրը ատէ, անիկա ստախօս է, քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝ որ կը տեսնէ, Աստուած՝ որ չի տեսներ, ի՞նչպէս կրնայ սիրել: Ա. Յովհ. 4: 20

Բայց Հոգիին պտուղը այս է. Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն: Գաղ. 5: 22-23ա

Նորէն երկրորդ անգամ ըսաւ անոր. «Սիմո՛ն, Յովնանի որդին, զիս կը սիրե՞ս»: Ըսաւ անոր. «Այո՛, Տէ՛ր, դուն գիտես թէ քեզ կը սիրեմ»: Ըսաւ անոր. «Արածէ՛ իմ ոչխարներս»: Յովհ. 21: 16

Եթէ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչող ծնծղաներու պէս: Ա. Կոր. 13: 1

Մենք գիտենք թէ մահէն կեանքի փոխուեցանք, վասն զի եղբայրները կը սիրենք. ան որ եղբայրը չի սիրեր՝ մահուան մէջ կը մնայ: Ա. Յովհ. 3: 14



Անկէ յետոյ Յիսուս իր աշակերտներուն ցուցուց թէ՝ պէտք է, որ ինք երուսաղէմ երթայ ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն եւ քահանայապետներէն ու դպիրներէն, եւ սպաննուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ:

Մատթ. 16: 21

Ծշմարիտ ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ պիտի գայ եւ հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը, եւ անոնք որ կը լսեն, պիտի ապրին:

Ասոր վրայ մի՛ զարմանաք. վասն զի ժամանակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն ու դուրս պիտի գան: Անոնք որ բարի գործեր են՝ կեանքի յարութեան համար եւ անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար:

Յովհ. 5: 25 եւ 28-29

Զե՞ք գիտեր, թէ մենք որ Յիսուս Բրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուեցանք: Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար. որպէս զի ինչպէս Բրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն, այնպէս ալ մենք կեանքի նորոգութեան մէջ պտըտինք: Վասն զի եթէ մենք տնկակից եղանք անոր մահուանը նմանութիւնովը, նաեւ անոր յարութեանը նմանութիւնովն ալ կ'ցորդ պիտի ըլլանք:

Հռովմ. 6: 3-5

Եւ մենք վկայ ենք այն ամէն բաներուն որոնք ըրաւ Հրէաստանի ու Երուսաղէմի մէջ, որ փայտէն կախուած սպաննեցին ալ: Աստուած զանիկա երրորդ օրը յարուցանեց, եւ յայտնի ըրաւ զանիկա, ոչ թէ բոլոր ժողովուրդին, հապա մեզի, նախապէս Աստուծմէ վկայ ըլլալու ընտրուածներուս, որ իրեն հետ կերանք ու խմեցինք ալ անոր մեռելներէն յարութիւն առնելէն ետքը:

Գործք 10: 39-41

Ութ օր յետոյ դարձեալ աշակերտները նետրն էին, Թովմաս ալ անոնց հետ. եկաւ Յիսուս, թէեւ դռները գոց էին ու կայնեցաւ անոնց մէջտեղը եւ ըսաւ. «Խաղաղութիւն ձեզի»: Ետքը ըսաւ Թովմասին. «Մատդ հո՛ւ բեր եւ նայէ՛ իմ ձեռքերուս, ու բե՛ր քու ձեռքդ եւ իմ կողս խորէ, ու մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ»: Եւ Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ անոր. «Իմ Տէրս եւ իմ Աստուածս»:

Յովհ. 20: 26-28

## ԿՊԻՆԵՆԱ

Որպէս զի մեր թշնամիներուն ձեռքէն ազատուելով՝ առանց վախի զանհկա պաշտենք Սրբութիւնով ու արդարութիւնով անոր առջեւ մեր կեանքին բոլոր օրերուն մէջ: Ղուկ. 1: 74-75

Ուստի, սիրելիներ, որովհետեւ մենք այս խոստումքները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրենք, եւ սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը: Բ. Կորնթ. 7: 1

Ուստի եթէ մէկը իր անձը անարգ բաներէ մաքրէ, անհկա պատուական անօթ մը պիտի ըլլայ, սրբուած ու իր Տէրոջը պիտանի, ամէն բարի գործերու համար պատրաստուած: Բ. Տիմ. 2: 21

Ընտրուած Հօր Աստուծոյ կանխագիտութեանը համեմատ՝ Հոգիին սրբացնելովը, հնազանդութեան եւ Յիսուս Քրիստոսին արիւնին սրսկուելուն համար. շնորհք եւ խաղաղութիւն ձեր վրայ թող շատնան: Ա. Պետրոս 1: 2

Հապա ձեզ կանչող Սուրբին պէս դուք ալ սուրբ եղեք ձեր բոլոր վարմունքներուն մէջ:

Ա. Պետրոս. 1: 15

Հոն պողոտայ ու ծամբայ պիտի ըլլայ, ու անիկա Սրբութեան Պողոտայ պիտի կոչուի: Անկէ պիղծ մէկը պիտի չանցնի: Հապա անիկա անոնց համար պիտի ըլլայ, որոնք անոր կ'երթան ու յիմարներն անգամ պիտի չմոլորին:

Եսայեայ 35: 8

Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, եւ մեզ ամէն անիրաւութենէ սրբելու:

Ա. Յովհ. 1: 9

Ես ձեզ ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց իմ ետեւէս եկողը ինձմէ զօրաւոր է: Ես անոր կօշիկները կրելու արժանի չեմ: Անիկա ձեզ պիտի մկրտէ Սրուբ Հոգիով ու կրակով:

Մատթ. 3: 11

Ինչպէս մեզ անով աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց, որպէս զի մենք սիրով սուրբ ու անարատ ըլլանք իր առջեւ:

Եփես. 1: 4

Քեզի կը դիմեմ. հեռացու՛ր, մերժէ՛ մարմինէս՝ որ քու խորանդ է, ապականիչ չարերուն գունդերը, որպէսզի քու բարի հոգիդ գայ բնակի անոր մէջ, ու սրբելով շունչս...

ՆԱՐԵԿԱՑԻ

## ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆ ԿԸԼԼԱՆ

Աշակերտները ուրախութեամբ եւ Սուրբ  
Հոգիով կը լեցուէին:

Գործք 13: 52

Բայց դուք մարմնով չէ՛ք, հապա՛ հոգիով, եթէ  
Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ  
մէկը Քրիստոսին Հոգին չունի, անիկա անորը չէ:

Հռովմ. 8: 9

Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն  
աղէկ ընծաներ տալ գիտէք, որչա՛փ աւելի ձեր  
Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ  
իրմէ կը խնդրեն:

Ղուկ. 11: 13

Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու դուք  
իմ օրէնքներուս մէջ պիտի քալէք, ու իմ  
իրաւունքներս պիտի պահէք ու գործադրէք:

Եզեկիէլի 36: 27

Բայց Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը  
զօրութիւն պիտի առնէք ու ինծի համար վկաներ  
պիտի ըլլաք:

Գործք 1: 8ա

Երբ անոնք աղօթք ըրին, շարժեցաւ այն տեղը՝  
ուր հաժարուած էին եւ ամէնքը Սուրբ Հոգիով  
լեցուեցան ու Աստուծոյ խօսքը համարձակ կը  
խօսէին:

Գործք. 4: 31

## ՀՐԱՇԱԼԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Տերը մօտ է անոնց, որոնց սիրտը կոտրած է, ու հոգիով խոնարհածները կ'ապրեցնէ: Սաղ. 34: 18

Քանզի այս բոլորը իմ ձեռքս շինեց ու այս բոլորը իմս են, կ'ըսէ Տերը, բայց ես այս մարդոց պիտի նայիմ, այսինքն խոնարհին եւ կոտրած հոգի ունեցողին ու իմ խօսքէս դողացողին:  
Ծաայեայ 66: 2

Եւ ինք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, եւ ա՛լ մահ պիտի չըլլայ: Ո՛չ սուգ եւ ո՛չ աղաղակ եւ ո՛չ ցաւ պիտի ըլլայ ասկէ յետոյ, վասն զի առաջուան բաները անցան:  
Յայտ. Յովհ. 21: 4

Սի՛րելիներ, օտար բան մի՛ սեպէք այն նեղութեան բորբոքումը, որ ձեզ փորձելու համար կ'ըլլայ, որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է: Հապա ուրախ եղե՛ք՝ քանի որ Քրիստոսին չարչարանքներուն հաղորդակից եղած էք, որպէս զի անոր փառքին յայտնուելու ատենն ալ ցնծութեամբ ուրախանաք:  
Ա. Պեռ. 4: 12-13

Տերոջը յուսա՛ ու բարութիւն ըրէ՛, երկրին վրայ բնակէ՛ ու ծշմարտութեան մէջ արածուիր: Սաղ. 37:3

Այն ազնուական եւ ընտիր առաքիւնութիւնը, որ ընդմիշտ կը մնայ անվթար եւ անխափան, պատուակից ըլլալով սիրոյ եւ յուսոյ: ՆԱՐԵԿԱՑԻ

Քանզի ինչ բանով որ ինք չարչարուեցաւ  
փորձութիւն կրելով, կրնայ փորձուողներուն ալ  
օգնական ըլլալ:

Եբր. 2: 18

Արդարին նեղութիւնները շատ են, բայց Տէրը  
բոլորէն կը փրկէ զանիկա:

Սաղ. 34: 19

Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի  
ըլլամ, երբ գետերէն անցնիս, պիտի չընկղմիս,  
երբ կրակի մէջէն քալես, պիտի չայրիս, բոցը քեզ  
պիտի չբռնկեցնէ:

Եսայեայ 43: 2

Սակայն գիտենք թէ ամէն բաները բարիին  
գործակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն,  
որոնք անոր նախասահմանութիւնովը կանչուած  
են:

Հռովմ. 8: 28

Ձեզի մարդկային փորձութենէն զատ ուրիշ  
բան չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է,  
որ ձեզ պիտի չթողու որ ձեր կարողութենէն աւելի  
փորձիք, հապա փորձութեանը հետ ազատութեան  
միջոց մըն ալ պիտի տայ, որպէս զի կարող ըլլաք  
համբերել:

Ա. Կորնթ. 10: 13

Անոր շնորհիւ յաւետ Աստուծով պիտի  
զօրանաս:

ՆԱՐԵԿԱՑԻ

Ան որ կը յաղթէ՝ ծերմականեր պիտի հագնի ու՛ես անոր անունը կենաց գրքէն պիտի չաւրեմ եւ անոր անունը պիտի դաւանիմ իմ Հօրս առջեւ ու անոր հրեշտակներուն առջեւ: 3այտ. 3ովհ. 3: 5

Ան որ կը յաղթէ, զանիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ: Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն նոր երուսաղէմին, որ երկինքէն իմ Աստուծմէս կ'իջնէ, եւ իմ նոր անունս. Ան որ ականջ ունի, թող լսէ: 3այտ. 3ովհ. 3: 12

Ան որ կը յաղթէ, ամէն բաները պիտի ժառանգէ ու ես անոր Աստուած պիտի ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլլայ: 3այտ. 3ովհ. 21: 7

Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՛նչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն՝ որ Աստուծոյ դրախտին մէջ է: 3այտ. 3ովհ. 2: 7

Կը հաւատամ... Զինք պիտի տեսնեմ, իր ողորմութեան եւ գթութեան մէջ, ու կը հաւատամ որ երկինքը պիտի ժառանգեմ նորէն...: ՆԱՐԵԿԱՑԻ



Բայց ես ձեզի կ'ըսեմ. «Ով որ իր կինը արձակե, առանց պողնկութեան պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն, եւ ով որ այն արձակուածը առնէ, շնութիւն կը գործէ»:

Մատթ. 5: 32

Ով որ իր կինը արձակե եւ ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, եւ ով որ էրիկէն արձակուած կին մը առնէ, շնութիւն կ'ընէ:

Ղուկ. 16: 18

Վասն զի այր ունեցող կինը իր ողջ էրկանը կապուած է օրենքով, բայց եթէ այրը մեռնի, արձակուած է էրկանը օրենքէն: Ուրեմն քանի որ այրը ողջ է, շուն պիտի կոչուի՝ եթէ ուրիշ էրկան մը կին ըլլայ. բայց եթէ այրը մեռնի, այն օրենքէն ազատ կ'ըլլայ, այնպէս որ շնացող չըլլար՝ եթէ ուրիշ էրկան մը կին ըլլայ:

Հոովմ. 7: 2-3

Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ, ո՛չ թէ ես, հապա՝ Տէրը, որ կինը այրէն չզատուի: (Իսկ եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ, կամ իր էրկան հետ հաշտուի), ու այրը իր կինը թող չձգէ:

Ա. Կորնթ. 7: 10-11

Վասն զի ինչպէս փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կ'երեւնայ, այնպէս պիտի ըլլայ Որդի մարդոյ գալուստը: Մատթ. 24: 27

Վասն զի ով որ զիս ու իմ խօսքերս դաւանիլը ամօթ սեպէ այս շնացող ու մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանիկա դաւանիլը ամօթ պիտի սեպէ՝ երբ գայ իր ճօրը փառքովը սուրբ հրեշտակներուն հետ: Մարկ. 8: 38

Այն ատեն Որդի մարդոյ նշանը պիտի երեւնայ երկնքի մէջ, ու երկրի բոլոր ազգերը կոծ պիտի ընեն եւ պիտի տեսնեն Որդին մարդոյ երկնքի ամպերուն վրայ եկած զօրութիւնով ու մեծ փառքով: Մատթ. 24: 30

Ահա գողի պէս կու գամ. երանի՜ անոր որ արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պահէ, որպէս զի մերկ չպտըտի ու իր ամօթը չերեւնայ: Յայտ. Յովհ. 16: 15

Վասն զի Որդին մարդոյ իր ճօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ եւ այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ: Մատթ. 16: 27

# ԱՍՏՈՒԾՈՅ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## 1. Փրկիչի մը պէտք ունիմ

Վասն զի ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան:

Հոով. 3: 23

Բայց ձեր անօրէնութիւնները Աստուծմէ բաժնեցին ձեզ:

Եսայ. 59: 2

## 2. Յիսուս ինծի համար մեռաւ

Վասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ անգամ չարչարուեցաւ, Արդարը անարդարներուն համար, որպէս զի մեզ Աստուծոյ մօտեցնէ:

Ա.Պետ. 3: 18ա

## 3. Պէտք է զղջամ՝ ապաշխարեմ

Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չի գտներ, բայց զանոնք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ:

Առակ. 28: 13

## 4. Յիսուսը հաւատքով պէտք է ընդունիմ

Բայց որոնք որ զինք ընդունեցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք իր կը հաւատան իր անուանը:

Յով. 1: 12

## 5. Փրկութեանս կրնամ վստահ ըլլալ

Ծշմարիտ, ծշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ. «Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ անոր որ զիս ղրկեց, յաւիտենական կեանք ունի ու դատապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէ դէպի կեանք անցած է»:

Յով. 5: 24

Published in numerous languages by World Missionary Press, Inc.,  
as God supplies funds in answer to prayer. **For questions or more  
information by country, visit: [www.wmp-contacts.org](http://www.wmp-contacts.org)**

## Զրի, ոչ ծախու



World Missionary Press  
PO Box 120  
New Paris, IN 46553-0120 USA  
[www.wmpress.org](http://www.wmpress.org)

Read booklets online or by App  
[www.wmp-readonline.org](http://www.wmp-readonline.org)